

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 48/2

20 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վահրամ Մարգարյանի 23.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ 24.08.2015 թ-ի թիվ 6109579 ակտի դեմ:

Ա/Ձ Վահրամ Մարգարյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Վահրամ Մարգարյանը հայտնում է, որ իրեն անհիմն տուգանել են չաշխատող սրճարանի և կլուբի հաստատագրված վճարի համար, որում բացակայում է իր մեղքը:

Ա/Ձ Վահրամ Մարգարյանը հայտնում է նաև, որ մշտապես այցելել է հարկային տեսչություն, որտեղ իրեն խորհուրդ են տվել չբողոքել և վստահեցրել են, որ հարցին լուծում կտրվի: Սակայն հետագայում գանգահարել և հայտնել են, որ արդեն ուշ է և ոչինչ հնարավոր չէ անել:

Ա/Ձ Վահրամ Մարգարյանը կլուբը բացելիս հարցրել է, թե ինչպես պետք է չափել մակերեսը, պատասխանել են, որ անհրաժեշտ է հիմք ընդունել միայն սեղանի մակերեսը, սակայն հետագայում պարզվել է, որ իրեն սխալ են խորհուրդ տվել:

Ինչ վերաբերվում է բացօթյա սրճարանին, ապա այն ընդհանրապես չի աշխատել և չաշխատող սրճարանի հետ կապված անհիմն տուգանել են:

Ա/Ձ Վահրամ Մարգարյանը այցելել է հարկային տեսչություն որպեսզի դադարեցնի գործունեությունը, սակայն չեն թողել՝ պատճառաբանելով, որ իրենց մեղքն է, կշտկեն: Եղել է նաև որոշակի գումար վճարելու առաջարկ, սակայն Ա/Ձ Վահրամ Մարգարյանը հրաժարվել է: Այնուհետև Ա/Ձ Վահրամ Մարգարյանին է ուղարկվել ստուգման ակտը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վահրամ Մարգարյանը խնդրում է հարցին տալ լուծում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ պետի 21.07.2015 թ-ի թիվ 6109579 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Վահրամ Մարգարյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ 24.08.2015 թ-ի թիվ 6109579 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 1.489.200 դրամ:

Տվյալ դեպքում Ա/Ձ Վահրամ Մարգարյանի գանգատը վերաբերվում է Ակտի 2-րդ և 3-րդ կետերով արձանագրված խախտումներին:

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ գլխավոր հարկային տեսուչ Վարուժան Ղուկասյանի կողմից 22.07.2015 թ-ին ժամը 21:50-ին ք.Երևան, Աբովյան 41/2, Կենտրոնի ուսանողական այգի հասցեում գտնվող Ա/Ձ Վահրամ Մարգարյանին պատկանող բացօթյա սրճարանից կատարվել է գնում 2 հատ

«Կոկա-կոլա» և 2 սուրճ 750 դրամ արժողությամբ, ինչպես նաև նկուղային հարկում գտնվող կարաոկե ակումբից գնվել է մեկ հատ «Սեվն ափ» ըմպելիք 300 դրամի, և մուտքի համար վճարվել է 1650 դրամ: Աշխատակիցը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնահետ ժամը 21:53-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ Օ դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքները: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքները՝ 1950 դրամը և 750 դրամը, ժամը 21:53-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 21:54-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 2700 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Վահրամ Մարգարյանը ք.Երևան, Աբովյան 41/2, Կենտրոնի ուսանողական այգի հասցեում իրականացնում է հանրային սննդի գործունեություն (բացօթյա սրճարան և կարաոկե ակումբ): Ա/Ձ Վահրամ Մարգարյանի կողմից Գավառի ՏՀՏ չի ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին թիվ 1 ձևով սահմանված հայտարարություն 2015 թ-ի հուլիս ամսվա համար, սակայն փաստացի գործունեություն է իրականացվել 79 ք.մ. սպասարկման մակերեսով: «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 9-րդ կետի համաձայն հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար արտոնագրային վճարի ամսական դրույքաչափը կազմում է 193.200 դրամ, որի նկատմամբ կիրառվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 1.159.200 դրամ:

Ակտի 2-րդ կետով արձանագրված խախտման վերաբերյալ գլխավոր հարկային տեսուչ Վարուժան Ղուկասյանը նշեց, որ 22.07.2015 թ-ին ժամը 21:50-ին ք.Երևան, Աբովյան 41/2, Կենտրոնի ուսանողական այգի հասցեում գտնվող Ա/Ձ Վահրամ Մարգարյանին պատկանող բացօթյա սրճարանից իր կողմից գնվել է 2 հատ «Կոկա-կոլա» և 2 սուրճ, ինչպես նաև կարաոկե ակումբ մուտք գործելու և մեկ հատ «Սեվն ափ» ըմպելիքի համար ընդհանուր առմամբ վճարվել է 2700 դրամ: Սակայն աշխատակիցը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Նշված փաստը հիմնավորվել է կատարված գնումներից հետո ՀԴՄ-ից դուրս բերված «Z» հաշվետվության տվյալներով: Ընդ որում հարկ է նշել, որ ՀԴՄ-ից «Z» հաշվետվությունը դուրս է բերվել ժամը 21:53-ին, որի համաձայն հասույթը կազմել է Օ դրամ: Դա նշանակում է, որ 22.07.2015 թ-ին աշխատանքային օրվա սկզբից մինչև ժամը 21:50-ն ընկած ժամանակահատվածում վերագրյալ վայրերում իրականացված գնումների հասույթները չեն մուտքագրվել ՀԴՄ:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ բացօթյա սրճարանն այդ օրը չի աշխատել, ապա ստուգումն իրականացրած անձինք նշեցին, որ այդ պնդումները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ ստուգման ընթացքում պատվիրված սուրճը մատուցվել է հենց սրճարանի բացօթյա հատվածում:

Քննարկման ընթացքում հաստատվեց նաև այն հանգամանքը, որ Ա/Ձ Վահրամ Մարգարյանն առանց 2015 թ-ի հուլիս ամսվա համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն ներկայացնելու փաստացի գործունեություն է

իրականացրել: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածի 5-րդ կետի համաձայն. «Արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն»:

Նույն հավելվածի 6-րդ կետի համաձայն. «Հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան: Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի»:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ արտոնագիր ստանալու համար հայտարարության ներկայացումը պարտադիր է:

Քննարկվող դեպքում Ա/2 Վահրամ Մարգարյանն առանց 2015 թ-ի հուլիս ամսվա համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն ներկայացնելու և արտոնագիր ստանալու 2015 թ-ի հուլիս ամսին իրականացրել է արտոնագրային վճարով հարկվող գործունեություն, որի համար և կիրառվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ 24.08.2015 թ-ի թիվ 6109579 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

